

## ԱԳՐԱՐԱՑԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՆՐԱ ԼՈՒՇՈՒՄԸ ԹՈՒՍԱՍ- ՏԱՆՈՒՄ

### I

Բոլոր հերթական հարցերից, որոնց լուծումով  
պէտք է զբաղուի ապագայ Պետական Դուման, ամենա-  
կարևորը և ամենաանյետաձգելին՝ ագրարային հարցն է:  
Նրա կարևորութիւնը առաջ է գալիս նրանից, որ նրա-  
նով շահագրգոռուած է ազգաբնակութեան <sup>4/5</sup> մասը,  
այսինքն մօտ 85 միլ. հոգի:

Ուսւաստանը բոլոր ուրիշ եւրոպական երկիրներից  
ամենամեծ իրաւունքը ունի հողագործական երկիր կոչ-  
ուելու: Նրա արդիւնագործութիւնը (ինդուստրիան), չը  
նայած կառավարութեան գործ դրած բոլոր ջանքերին,  
չի կարողանում այնքան զարգանալ, որ հնարաւորութիւն  
ստանայ, գոնէ մասամբ, կլանել այն բանուորական ձեռ-  
քերը, որ արտադրում է ամենայն տարի ազգաբնա-  
կութիւնը և դուրս նետում շուկայ. և այդ աւելացած  
բանուորական բանակը ստիպուած է իր ոյժերը գործա-  
դրել հողի մշակութեան վրայ:

Միւս կողմից, ուսւաց ինդուստրիան, չկարողա-  
նալով իր ապրանքները սպառել դրսում և մրցել ուրիշ երկրների հետ, պէտք է բաւականանայ միայն իր  
սեփական երկրով—ներքին շուկայով: Իսկ որպէս-  
զի այդ շուկայի յուսով ինդուստրիան զարգանայ՝  
պէտք է նրա արտադրած ապրանքները մեծ թուով  
գնողներ ունենան, որ կախուած է ազգաբնակու-  
թեան մեծամասնութեան՝ գիւղացիների գնելու կա-  
րողութիւնից կամ նրանց սպառողական ոյժի զարգա-  
ցումից, այսինքն՝ գիւղացու նիւթական ապահութիւնից և  
նրա կուլտուրական պահանջների զարգացման աստիճանից.

իսկ գիւղացու նիւթական կարողութեան աստիճանը անմիջապէս կապ ունի նրա հարստութեան միակ աղքիւր՝ հողի քանակի և մշակման ձևի։ հետո

Մինչդեռ շնորհիւ սակաւհողութեան և գիւղատընտեսական տեխնիկայի ստոր աստիճանին, ոռուս գիւղացին հազիւ հազ է քարշ տալիս իր «կիսասով» կեանքը։

Յայտնի է որ սակաւահողութիւնը Ռուսաստանում, հասնելով «հողային սովի» աստիճանին և առաջ բերելով հողային կրիզիս, արտայայտուեց այնպիսի սարսափելի խառնակութիւններով, որոնց մենք ականատես էինք անցեալ տարի։ Հրաբուխը այժմ, կարծես, ժամանակաւորապէս հանդարտուել է։ Բայց այդ կարծեցեալ հանգստութիւնը կարող է դաւաճանական լինել։ Գիւղացու համբերութիւնը արդէն հատել է։ Նա ինքը իր ձեռքն է վերցրել այդ հարցի լուծումը և ինքն է ուզում վճռել նրան։ Գիւղացին պարզ ասում է կալուածատէրերին։ «Ալլի որորներ նամ զեմլի, ու մա վաս որորներ։ Կամ աւելացրէք մեզ հողի կտոր, կամ մենք ձեզ կը կոտորենք»։

1902 թուի ազգարային շարժումը, որը Պլեվէի օրով հանգստացրուեց այնպիսի գաղանային միջոցներով, այս սարսափելի գրամայի միայն նախերգանքն էր, իսկ առաջի գործողութեան մենք ներկայ էինք անցեալ տարի։ Թէ ի՞նչ է սպասում Ռուսաստանին երկրորդ գործողութեան մէջ և ինչով պէտք է վերջանայ այս դրաման—դժուար է երեակայել անգամ։

Միայն մի բան պարզ է որ կառավարութիւնը իր աննպատակայարմար գործունէութեամբ և անհեռատեսութեամբ տալով ազգարային հարցին այդպիսի սուր բնաւորութիւն, անկարող է այժմ միայն ճնշող միջոցներով բնական հոսանքի առաջն առնել։ Ազգարային հարցը սուր կերպով գրուած է և պէտք է վճռուի այս կամ այն ձևով. այդ է պահանջում թէ ընդհանուր պետական շահերը և թէ Ռուսաստանի ներքին հանգստութիւնը։

Այս անհրաժեշտութիւնը լաւ հասկացել են Ռու-

սաստանի բոլոր քաղաքական կուսակցութիւնները, ո-  
րոնք իրանց ծրագիներում առանձին ուշադրութիւն են  
դարձնում այս հարցի վրայ:

Միայն կարծես կառավարութիւնն է որ արմատա-  
կան միջոցների մասին չի էլ մտածում, և երբ հողա-  
գործութեան և երկրաշխնութեան զվարար կառավարիչ  
պ. Կուտալերը փորձեց այդ հարցին մօտենալ լրջօրէն՝  
բիւրօկրատիան նրան ստիպեց հրաժարական տալ...

## II

Ազրարային շարժումը Ռուսաստանում հետեւանք է  
զիւղացիների սակաւհողութեան, կապալագների բարձրու-  
թեան, նրա պայմանների կամայականութեան և, վերջա-  
պէս, գիւղատնտեսական բանուորների վարձելու հարցի ա-  
նորոշութեան: Եւ իսկապէս, եթէ մենք լուրջ ուսում-  
նասիրենք այս վերջի տարիների շարժումները կը նը-  
կատենք որ Ռուսաստանի զանազան անկիւններում այս  
երեք պատճառներից մէկն ու մէկը առաջնակարգ տեղ  
է բռնում: Այսպէս, միջին Ռուսաստանում ազրարային  
շարժման զիսաւոր պատճառն է սակաւհողութիւնը, ա-  
րենելեան և հարաւային Ռուսաստանում երկրորդ պատ-  
ճառը՝ կապալագների բարձրութիւնը, իսկ արևմտեան  
Ռուսաստանում երրորդը՝ գիւղատնտեսական բանուոր-  
ների իրաւական անորոշութիւնը: Գիւղացիների սակաւ-  
հողութիւնը նոր չէ որ զգացւում է Ռուսաստանում.  
Նա գոյութիւն ունի հէնց գիւղացիներին ճորտութիւ-  
նից ազատելու օրից: Սակաւահողութիւնը զիսաւորապէս  
բացատրում է 1861 թ. ազատազրական օրէնքի մի քա-  
նի թերի կողմերով:

Ամեն մի քաղաքական կամ տնտեսական նորմու-  
ծութիւն կրում է այն բնաւորութիւնը, որ համապա-  
տասխանում է ժամանակի կառավարչական կազմի մէջ  
տեղի ունեցող հասարակական դասակարգերի ոյժերի  
համաշխափութեան: Եւ դրա համար էլ ամեն մի բեֆորմ

կրում է այն ուղղութիւնը, որը ցանկալի և ձեռնտու է այդ ժամանակում գերիշխող դասակարգին: 60-ական թուականներին (ինչպէս և այժմ) կառավարչական բոլոր գործերի վրայ իր ազդեցութիւնը ունէր ազնուականութիւնը, որը և համարեա միակ հողատէրն էր:

Գիւղացիներին ճորտութիւնից ազատելու սկզբական յենակէտը և նրա իրագործման պատմութիւնը կարող են ծառայել իրեւ փայլուն ապացոյց այն բանին, թէ որքան յուսալի և անաշառ լուծում կարող են ստանալ բանուորների և գիւղացիների դրութիւնը բարուոքելու նպատակով ուրիշ դասակարգերի ձեռքով մշակած միջոցները:

«1861 թ. «Պոլոժենիայի» կազմելու նախապատրաստական աշխատութիւնների պատմութիւնը, ասում է պրոֆ. Մանուկիով, զիջողութիւնների մի պատմութիւն է, որը քայլ առ քայլ խել են կալուածատէրերը օրէնսդրական այդ մեծ ակտի ստեղծողներից: \*), Գիւղացիներին հողագուրկ անելու կողմնակիցները, շարունակում է յարգելի պրոֆ., պարզ կերպով յայտնում էին, որ գիւղական ազգաբնակութեան հողի «պակաս» ապահովութիւնը անհրաժեշտ է կալուածատէրերի տնտեսութիւնները բանուորական ոյժով ապահովելու տեսակետով»:

Եւ կալուածատէրերը հասան իրանց նպատակին, ստիպելով այդ ըեփորմները խմբագրող յանձնաժողովին մէկը միւսի յետևկից անել զիջումներ:

Ինչպէս յայտնի է, 1861 թ. «Պոլոժենիէ»ի իրեւ յենակէտ էր վերցրուած այն միաքը, որ պէտք է գիւղացիներին ազատել ճորտութիւնից, տալով նրանց այնքան հող, որը կարող լինէր բաւարարեցնել նրանց պահանջները: Բայց, ինչպէս մենք կը տեսնենք, այս նախնական միաքը իրականութեան մէջ այնքան փոփոխութիւններ և կրճատումներ կրեց, որ գիւղացուն մի կրա-

\* ) Поземельный вопросъ въ Россіи.

կից ազատեց և գցեց մի ուրիշի մէջ։ Հողատէրերը՝ մի կողմից զգալով գիւղացիներին ճորտութիւնից ազատելու պետական անհրաժեշտութիւնը, միւս կողմից հսազնդուելով Կայսրի ցանկութեան, աշխատեցին ազատել նրանց այնպէս, որ այդ ձեռնոտու լինի իրանց համար։

Առաջ կալուածատէրերը աշխատեցին որոշել մի յայտնի «նորմալ» հողաբաժին (նադէլ), երբ նրանց այս բանը չյաջողուեց և «Պոլոժենիչն» խմբագրող յանձնաժողովը մնաց այն սկզբունքի վրայ, որ հողաբաժինները պէտք է պահպանեն իրանց մինչև 1859 թ. չափերը, այն ժամանակ հողատէրերի օպպողիցեան իր բոլոր ոյժը լարեց, որպէսզի այս սկզբունքը սահմանափակի՛ գոնէ նրա կեանքի մէջ իրագործելիս։ Եւ նրանց յաջողուեց այս անել։ Ամեն տեղի համար, բացի տափաստանի շերտի (стенная полоса), սահմանուեց «ամենամեծ» և «ամենափոքր» հողաբաժիններ, որոնք պէտք է ընդգրկէին գոյութիւն ունեցող նադէլները։ Եւ այն կալուածներում, ուր գոյութիւն ունեցող հողաբաժինը աւելի մեծ էր քան այդ տեղի համար սահմանուած «ամենամեծը», հողատէրը իրաւունք ունէր կարել իր օգտին այդ աւելութեալ բակ այնտեղ, ուր գիւղացիք ճորտութեան ժամանակ օգտւում էին աւել փոքր հողաբաժինով քան այդ տեղի համար որոշուած «ամենափոքր» նադէլը, կալուածատէրը պարտաւոր էր լրացնել այդ պակասորդը։ Բայց որովհետև այսպիսով շատ կալուածատէրեր կարող էին կորցնել իրանց կալուածքի մեծ մասը, և որպէսզի դրա առաջը առնուի մացրուեց հետևեալ վերապահումները։

Այն դէպքերում, երբ հողաբաժիններ հանելով, հողատիրոջ կալուածքի տարածութիւնը կարող էր  $\frac{1}{3}$ -ից (տափաստանի շերտի համար  $\frac{1}{2}$ ) աւելի պակասել, կալուածատէրը պարտաւոր չէր լրացնել գիւղացու հողաբաժինը մինչև «ամենափոքր» նադէլի չափը։ Իսկ երբ կալուածատէրի անմիջական հողատիրութիւնը այդ նորմաներից աւելէր, նա պարտաւոր էր ամեն մի հոգու համար

որոշած հողաբաժինների լրացման համար տալ այնքան հող, որպէսզի իր ձեռքում մնացածը չիջնի վերև յիշած չափերից, այսինքն  $\frac{1}{2}$ -ից:

Միւս կողմից կալուածատէրը իրաւունք ունէր գիւղացիների հողաբաժիններից իր օգտին կտրել նոյն խսկ այն դէպքերում, երբ վերջինի նադէլը աւել չէր քան սահմանած «ամենամեծ» հողաբաժինը։ Այս այն դէպքերում էր, երբ, գոյութիւն ունեցող հողաբաժինները պահպանելու ժամանակ, կալուածատէրի մասը կը կազմէր  $\frac{1}{3}$  ( $\frac{1}{2}$ )-ից պակաս։ Այսպէս ուրեմն թոյլատըրում էին դէպքեր, երբ գիւղացու հողաբաժնի չափը չհասնելով մինիմումի անգամ, մնում էր «ամենափոքր» նադէլի չափից էլպակառ։

Իսքն ըստ ինքեան հասկանալի է որ հողատէրերի համար գիւղացիական այդ «ամենամեծ» և «ամենափոքր» հողաբաժինների չափերը որքան փոքր լինէին այնքան ձեռնուու էր։

Եւ մենք տեսնում ենք որ «ամենամեծ» հողաբաժնի չափը «Պոլոժենիէի» խմբագրող յանձնաժողովի գործունէութեան երկրորդ և երրորդ շրջանում և, վերջապէս, «Պոլաժենիէի» վերջնական քննութեան ժամանակ ենթարկւում են հետզհետէ կրճատումների։ Խսկ ինչ վերաբերում է «ամենափոքր» հողաբաժինին, նա սկզբում ենթագրուած էր «ամենամեծի»  $\frac{2}{5}$ , խսկ վերջնական խմբագրութեամբ նա Մալօրոսիայի նահանգներում հասցրուեց «ամենամեծ» հողաբաժնի  $\frac{1}{2}$ , խսկ միւս նահանգներում  $\frac{1}{3}$ .

«Ամենամեծ» հողաբաժնի չափը կրճատելու շնորհիւ ստացուեց այնպիսի դրութիւն, որ գիւղացիների նախկին նադէլի զգալի մասը կտրուեց և անցաւ կալուածատէրերին։ Մինչդեռ այս վերջին դէպքերը սսվորական էին, հակառակը—երբ կալուածատէրը պէտք էր գիւղացու հողաբաժինը աւելացնի «ամենափոքր» նադէլի չափին հասցնելու համար—կրում էր բացառիկ երևոյթների բնաւորութիւն։

Բայց սա հարցի միայն մի կողմն է, կայ և մի ուրիշը, որը գիւղացու համար ունէր աւելի կործանիչ ազդեցութիւն, և որի պտուղները քաղում է դեռ ներկայ սերունդը:

Բանը այն է, որ հողատէրերը իրաւունք ստանալով վերոյիշեալ դէպքերում կտրել գիւղացիների հողաբաժիններից իրանց համար մաս, օգտում էին այս հանգամանքից և վերջնում էին հողի թէ ամենալաւ և թէ գիւղացու համար ամենաանհրաժեշտ և մեծ գին ունեցող մասերը, գնելով այսպիսով գիւղացիներին կապալով հող վերջնելը իրանց կամայականութեան տակ: Գիւղացին այժմ յաճախ ոտիլալուսած է այդ «Կտրուածքները» կալուածատէրից կամ գնել կամ վերջնել կապալով, ինչ բարձր գին էլ որ նշանակելու լինի, որովհետեւ առանց այդ կտրուածքների նա չի կարող եօրայ գնալ: Բացի այդ, պէտք է նկատել որ այսպիսի հողամասերը յաճախ կազմում են այնպիսի կտրներ, որ գիւղացին՝ իր անսասունաները արօտատեղի դուրս բերելու կամ ջրելու համար՝ պէտք է անցնի նրանցով: Այդ «Կտրուածքները» գըտնուելով գիւղացիների հողերի կից կամ մէջը ծառայում են գիւղացիներից տուգանքներ ստանալու աղքիւր, երբ վերջինների կովը կամ մին ընկնում է այնտեղ:

Վերև յիշած վերապահումների շնորհիւ ճորտութիւնից ազատուած գիւղացիների հողաբաժինները ընդհանուր առմամբ ոչ միայն չաւելացան, այլ նոյն իսկ զգալի կերպով կրճատուեցին: Մենք ձեռքի տակ չունենք բոլոր նահանգներին վերաբերուող թուեր, որպէս զի կարողանայինք ասել թէ որ չափով է տեղի ունեցել այդ կրճատումը, բայց որ այս վերջինս տեղի է ունեցել՝ այդ փաստ է: Այսպէս, օրինակ, պրոֆ. Իվանիկովի հաշուով 8 միջին նահանգներում գիւղացիների  $11\frac{1}{2}\%$ /0 ճորտութիւնից ազատուելուց յետոյ մնաց հողաբաժիններով ոչ ապահովուած,  $34\frac{1}{2}\%$ /0 բաւարար ապահովուած, հաշուելով այդպիսիներ 4 դեսեատին հողաբաժին ստացողներին, և  $54^0$ /0 նուազ ապահովուած, հաշուելով այս-

պիսիներ 2 դես. պակաս հողաբաժիններ ստացող-  
ներին: \*)

Գիւղացիների սակաւահողութեան միւս կողմից  
նպաստեցին «Պոլոժենիէի» այն յօգուածները, որոնք թոյլ  
էին տալիս գիւղացիներին հողատէրների հետ փոխաղարձ  
համաձայնութեամբ հրաժարուել հողաբաժինի մի մա-  
սից. գիւղացիների համար կործանիչ ազդեցութիւն ու-  
նեցաւ նա մանաւանդ «Պոլոժենիէի» 123 յօդ., որի  
շնորհիւ կալուածատէրելը նոյնպէս գիւղացիների վո-  
խաղարձ համաձայնութեամբ կարող էին տալ վերջին-  
ներին ծրի ամենամեծ կամ հրամանագրուած (յեզով)  
հողաբաժնի մի չորորդ մասը, որից յետոյ նագէնի հո-  
գի միւս մասը անցնում էր կալուածատէրին. այնուհետև  
կալուածատէրին նրա նախկին ճորտի մէջ վերջանում էին  
բոլոր հաշիւները:

Գիւղացիներից շատերը, համոզուած լինելով որ  
պէտք է յետոյ նոր հողաբաժիններ տրուեն և որ վերջի  
վերջոյ բոլոր հողերը պէտք է անցնեն նրանց ձեռքը,  
լայն չափերով օգտուամ էին «Ճրի» հողաբաժին ստա-  
նալու այս կարծեցեալ արտօնութիւնից:

Այդ համոզմունքը ուսւա գիւղացու մէջ դեռ մինչեւ  
այսօր էլ կենդանի է:

Մի կողմից այս սխալ համոզմունքը, միւս կողմից  
էլ դրամով հարկատուութեան նորութիւնը, հողաբաժին-  
ների չափազանց թանգ գնահատութիւնը և, վերջապէս,  
հողատէրերի ճնշումը ունեցան այն հետեանքը, որ այդ-  
պիսի «մուրացկանական» (ԽԱՅԵԿԻ) կամ «որբական»  
(СИРОТСКԻ) հողաբաժին ստացող գիւղացիների թիւը  
հասաւ 37 նահանգներում մի պատկառելի թուի, այն  
է 600,000 հոգու \*) մի քանի նահանգներում կազմելով  
գիւղացիների 50/0 (օր. Սամարայի նահանգում):

Ուշագրաւ է այն հանգամանքը, որ այսպիսի գիւ-

\*) Խվանիւկով եր. 315.

\*) Проф. Ходскій «Земля и аемледѣлецъ». II, стр. 41  
Фեвраль, 1906.

դացիների մեծամասնութիւնը գտնուում է այն նահանգ-ներում, ուր հողի առատութիւն է և կարելի է հողը հեշտութեամբ կապարով վերցնել: Եւ որովհետև գիւղացիների ազատման ժամանակ թէ հողի գինը և թէ կապավագրձը շատ աւելի պակաս էին, քան կառավարութեան կողմից հողաբաժինների նշանակած գները (օր. Սամարայի նահանգում այդ գները 5 անգամ պակաս էին վերջիններից) հասկանալի է որ գիւղացիները գերադասում էին կապարով վերցնել հողեր, քան նադել ստանալ այդպիսի ծանր պայմաններով կալուածատէրերից:

Բացի այդ գիւղացիների մի ստուար մասը, այն է. կալուածատէրերի ծառաները (дворовые люди) և զանազան հանգամանքներից ստիպուած մեշշան դասակարգին անցածները բոլորովին հող չստացան: Միայն առաջինների թիւը հանում է 720,000 մարդու:

Այսպիսով, ուրեմն, հէնց ճորտերի ազատման օրից առաջ եկաւ գիւղացիների մի ստուար բազմութիւն, որը կամ բոլորովին զրկուած էր հողից կամ ստացել էր անբաւարար և փոքր հողաբաժին:

Երկրորդ սխալը, որը թոյլ տուեց «Պոլոժինիէի» խմբագրոյ յանձնաժողովը և որը նոյնպէս շատ աննըպաստ ազդեցութիւն ունեցաւ գիւղացիների անտեսական զրութեան վրայ այդ՝ հողի գնահատման ձեն էր: Բանը նրանում որ նոյն յանձնաժողովը ընդունեց այն սխալ (ինչպէս յետոյ կը պարզենք) հայեացակէտը, թէ գիւղացին որքան քիչ հող ստանայ, այնքան շատ աշխատանք կը գործ գնի ամեն մի դեսեատ. հողի վրայ, այնքան լաւ կը մշակի հողը, և հետեապէս այնքան մեծ արդինք կը ստանայ: Այսպէս օր. առաջի դեսեատինը կարող է աւելի արդինք տալ քան երկրորդը, երկրորդը աւելի քան երրորդը և այլն: Այսպէս էլ անհաւասար կերպով գնահատում էր հողի իւրաքանչիւր դեսեատինը: Առաջի դեսեատինը աւելի թանգ քան երկրորդը, երկրորդը թանգ քան երրորդը և այլն: Եւ այս գները

աճում էին ոչ համեմատական չափով (պրոպորցիանալի-  
հո): Հողերի այս ձեւ գնահատելու շնորհիւ ստա-  
ցուեց այն, որ հողաբաժինը որքան փոքր էր, այնքան  
թանգ էր նատում նրա իւրաքանչիւր դեսեատինը: Այս հան-  
գամանքից էլ նոյնպէս օգտում էին հողատէրերը, աշ-  
խատելով որքան կարելի է փոքր հողաբաժին տալ: Ճոյց  
տալու համար թէ շնորհիւ այդ բանի ինչ զանազանու-  
թիւն էր առաջ գալիս գների մէջ, բաւական է բերել  
հետևեալ թուերը. Սիմբիրսկի նահանգում ամենամեծ  
հողաբաժին ստացողին իւրաքանչիւր դեսեատինը նրա-  
տում էր 30—36 ր., իսկ ամենափոքր ստացողին 45—  
51 ր.:

Յօդուածի այս մասում մեր գլխաւոր միտքը—ցոյց  
տալ որ սակաւհողութեան գլխաւոր պատճառը 1861 թ.  
բեֆորմների թերի և անարդար օրէնսդրութիւնն էր,—  
պարզաբանելու համար համեմատենք այստեղ նախկին  
կալուածատիրական գիւղացիների դրութիւնը նրանց հա-  
րեան պէտական և թագաւորական տան գիւղացիների  
դրութեան հետ: Այս վերջինների նկատմամբ բեֆորմնե-  
րը իրագործուեցին ճիշտ այնպէս, ինչպէս որ առաջուց  
նախատեսնուած էր, առանց որևէ կրճատումների: Սը-  
րանք ստացան այն բոլոր հողաբաժինները, որոնցով  
նրանք օդուում էին մինչև բեֆորմները: Եւ արանց  
նադէնները ընդհանուր առմամբ աւելի մեծ են քան նոյն  
իսկ նախկին կալուածատիրական գիւղացիների ամենա-  
մեծ նադէնները: Բերենք մի քանը թուեր այս բանը  
պարզաբանելու համար: Ընդունելով պետական գիւղա-  
ցիների ստացած միջակ նադէլը իբրև նորմա, որը կա-  
րող է գոհացում տալ գիւղացու ընդանիքի կարիքնե-  
րին, պրօֆ. Խոդակի հաշւում է որ նախկին կալուա-  
ծատիրական գիւղացիներից (ընդամենը 10,608,100)  
 $13,9\%$  ( $1\frac{1}{2}$  միլ.) ստացել է այդ նորմայից աւել.  
 $43,5\%$  ( $4\frac{1}{2}$  միլ.) միայն բաւարար նադէլ և  $42,5\%$

(համարեա նոյնքանը) անբաւարար \*): Հետևեալ աղիւսակը, որը բերում ենք Բրոկհառովի բառարանի «Գիւղացիներ» վերնազըռով յօդուածից (722 եր.) աւելի լաւ կը պարզի այդ զանազանութիւնը:

Շունչ	առատ	բաւարար	պակաս
Պետ. և թագ.	10,670,600	50,7	35,7
Կալուածատ.	10,608,100	13,9	43,5

Եթէ սրան աւելացնենք և այն որ առաջինների հողային տուրքի չափը  $2 - 2^{1/2}$  անգամ աւելի պակաս էր սահմանուած քան նոյն նահանգներում նախկին կալուածատիրական գիւղացիների յետքնման վճարները, հասկանալի կը լինի թէ ինչ մեծ անարդարութեամբ է վճռուել այս վերջինների վիճակը:

«Զի կարելի չյիշել», ասում է պրորֆ. Մունուիլովը իր վերև յիշած աշխատութեան մէջ, որ հողատիրական դասակարգը կրում է պատմական պատասխանատութիւն 1861 թ. բեֆորմների համար, և դրա համար էլ արդարացի է, որ նա այս պակասութիւնները ուղղելու մէջ ընդունի նիւթական մասնակցութիւն: «Այն որ հողատիրական դասակարգը, շարունակում է յարգելի պրոֆ., ճորտութեան իրաւունքի վերացման ժամանակ ստացաւ մի ստուար մաս այն հողից, որը գտնուում էր գիւղացիների ձեռքում և որոնցով նրանք օգտուում էին, — պատմական փաստ է և միենոյն ժամանակ պատմական անբարեխողնութիւն, որը պէտք է ուղղել»:

Յաջորդ համարում մենք կանգ կ'առնենք ազրարային հարցը վճռելիս կառավարութեան քաղաքականութեան վրայ:

Երուանդ Սարգսնան

\* ) Արք. Խօսկի ստ. 243